

Վեր. Յ. Սելիմեանի Այցը Հայ դատի Կեդրոնական Գրասենեակ

Վերապատուելի Յարութին Սելիմեան ընդառաջելով Washington-ի Հայ Դատի Կեդրոնական գրասենեակի Տնօրէն՝ Տիար Արամ Համբարեանի եւ տեղւոյն Կեդրոնական Կոմիտէութեան հրաւերին, որ տեղի ունեցաւ Ուրբաթ 8 Փետրուար, 2013-ին: Փոխադարձ սիրոյ ողջոյնի բարեմաղթութիւններու փոխանակումէն ետք, Վեր. Յ. Սելիմեան կատարեց համապարփակ ներկայացում Սուրիոյ իրավիճակին եւ յատկապէս՝ Սուրիահայ իրականութեան հետ առնչուած տիրահոշակ իրականութիւններու: Այս առիթով Սուրիահայութեան անունով յատուկ շնորհակալութիւն յայտնեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գտնուող հայ Միութիւններու անխտիր, որոնք ցայսօր կը միտին նիւթական հանգանակութիւն կատարել, ամփոքելու նեղութեան մատնուած Սուրիահայութեան: Վերապատուելին դիտել տուաւ, թէ՛ պատերազմային ճգնաժամային օրերը աւարտելէն ետք (ինչ որտեղ մօտալուտ ապագային պիտի շօշափենք), պէտք է շարունակել մասնացկութիւն եւ ներդրում ունենալ Սուրիահայ իրականութեան վերականգնումի խիստ կարեւոր աշխատանքին մէջ: Նաեւ այս առիթով տեղի ունեցաւ հայ ժողովուրդի հայրենիքի եւ սփիւռքի տարբեր ցամաքամասերու վրայ տարածուած հայորդիներու համընդհանուր տագնապներուն եւ նուաճումներուն մասին զեկոյցներու փոխանակում, որը մեզ ազգովին պահելու է միշտ առաւել արթուն եւ զգաստ պատնէշի վրայ, իբրեւ արդար դատի իրաւատէր ժողովուրդ:



